Համայնքի ղեկավարը նշեց, որ հուլիսի 15-ի գիշերը գյուղի բնակավայրում տեղի է ունեցել ուժեղ քամի և փոթորիկ, որը արդեն իսկ ուսումնասիրվել է հանձնաժողովի կողմից և կազմվել համապատասխան ակտ, սակայն այդ նույն գիշերը համայնքի հարակից տարածքում, որտեղ ցանված են հացահատիկային կուլտուրաներ և կարտոֆիլ, տեղացել է ուժեղ կարկուտ, որի հետևանքով մասամբ կարկտահարվել է շատ բնակիչների սեփականությամբ մոտ 25 հա ցանքատարածք: Ելնելով ստեղծված իրավիճակից համայնքի ավագանին

Որոշեց

1. Հանձնարարել համայնքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին կատարած ուսումնասիրությունների հիման վրա կազմել համապատասխան ակտ և ներկայացնել Գեղարքունիքի մարզպետարան:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին 3. Ստացված դիմումների քննարկումը համայնքի աշխատակազմի քարտուղարի ներկայացրած դիմումները համայնքի բնակիչներ՝ Լիանա Թաթուլի Հովհաննիսյանի դիմումը սկեսուրի, Համլետ Վերգինեսի Մկրտչյանի դիմումը իրեն տղայի 22 բանակում զինվորական երդման արարողությանը մասնակցելու ճանապարհածախսի համար համայնքի ավագանին

Որոշեց

1. Բավարարել համայնքի բնակիչներ՝ Լիանա Թաթուլի Հովհաննիսյանի և Համլետ Վերգինեսի Մկրտչյանի դիմումները համայնքի բյուջեից հատկացնել յուրաքանչյուրին 30000 /երեսուն հազար/ դրամ օգնություն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Հ/Հ | Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Գագիկ Սարգսյան | | | |
| 2 | Կամլեթ Գալստյան | | | |
| 3 | Մանուկ Հակոբյան | | | |
| 4 | Վոլոդյա [illegible] | | | |
| 5 | Վիտալիկ Կարապետյան | | | |

Նոր[illegible] համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնք
Գ. Նորակերտ 2 փող. 34 շենք հեռ. 094 01 21 65

17 ՀՈՒԼԻՍԻ 2018 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 հուլիսի 2018 թ-ի թիվ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

### ՕՐԱԿԱՐԳ

1. Նորակերտ համայնքի բնակիչների՝ Սերյոժա Սարգսյանի, Գագիկ Սարգսյանի օժանդակ շինությունների տանիքը և դպրոցի շենքի տանիքը, ուժգին քամու և փոթորիկի հետևանքով տուժելու մասին:
   / զեկ. Գ. Սարգսյան – համայնքի ղեկավար /
2. Հուլիսի 15-ին տեղած ուժեղ կարկուտի հետևանքով տուժած Նորակերտ համայնքի գյուղացիական տնտեսությունների վնասի մասին:
   / զեկ. Գ. Սարգսյան – համայնքի ղեկավար /
3. Ստացված գրությունների քննարկում:
   / զեկ. Գ. Սարգսյան – համայնքի ղեկավար /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով ավագանին

Որոշեց

Հաստատել Նորակերտ համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 17-ի նիստի օրակարգը բաղկացած 3 հարցից:

Լսեցին 1. Նորակերտ համայնքի բնակիչներ՝ Սերյոժա Սարգսյանի, Գագիկ Սարգսյանի օժանդակ շինությունների տանիքը և դպրոցի շենքի տանիքը, ուժգին քամու և փոթորիկի հետևանքով տուժելու մասին համայնքի ղեկավարի զեկույցը և ելույթով առաջարկված լրացմամբ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Հանձնարարել համայնքի սոցիալական խնդիրների հանձնաժողովին կատարած ուսումնասիրությունների հիման վրա կազմել համապատասխան ակտ և ներկայացնել Գեղարքունիքի մարզպետարան:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին 2. Հուլիսի 15-ին տեղած ուժեղ կարկուտի հետևանքով տուժած Նորակերտ համայնքի գյուղացիական տնտեսությունների վնասի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնք
Գ. Նորակերտ 2 փող. 34 շենք հեռ. 094 01 21 65
01 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01 օգոստոսի 2018 թ-ի թիվ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՕՐԱԿԱՐԳ

1. Դիմումների քննարկում

/ զեկ. Գ. Սարգսյան – համայնքի ղեկավար /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով ավագանին

Որոշեց.

Հաստատել Նորակերտ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 1 - ի նիստի օրակարգը

Լսեցին 1. Նորակերտ համայնքի բնակիչներ Դավիթ Հովհաննիսյանից, - բնակարանի ծանր պայմանների, Մուրադ Հովհաննիսյանից – սղայի բանակում զինվորական երդման արարողությանը մասնակցելու, Անուշավան Բազոյանից – բուժման մեկնելու կապակցությամբ, ստացված դիմումների մասին,

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկած համայնքի բնակիչներ Դավիթ Հովհաննիսյանից, - բնակարանի ծանր պայմանների, Մուրադ Հովհաննիսյանից – սղայի բանակում զինվորական երդման արարողությանը մասնակցելու, Անուշավան Բազոյանից - բուժման մեկնելու կապակցությամբ, ստացված դիմումները, և հաշվի առնելով նրանց սոցիալական վիճակը համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Համաձայնություն տալ հաշվապահին համայնքի բյուջեից հատկացնել Դավիթ Հովհաննիսյանին 40000 դրամ, Մուրադ Հովհաննիսյանին 30000 դրամ, Անուշավան Բազոյանին 30000 դրամ օգնություն։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից։

| հ/հ | Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Գագիկ Սարգսյան | | | |
| 2 | Դավիթ Գալստյան | | | |
| 3 | Մանուել Հակոբյան | | | |
| 4 | Վարդան Մխիթարյան | | | |
| 5 | Վլադիմիր Գալստյան | | | |

Նորակերտ համայնքի ղեկավար Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնք
Գ. Նորակերտ 2 փող. 34 շենք հեռ. 094 01 21 65

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.08.2018 թ-ի թիվ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով ավագանին

Որոշեց

Հաստատել Նորակերտ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 20-ի նիստի օրակարգը

1. Նորակերտ համայնքապետարանի 2018 թվականի բյուջեում ծախսերի անհրաժեշտությամբ պայմանավորված փոփոխության կատարելու առաջարկության մասին:
   / զեկ. Գ. Սարգսյան – համայնքի ղեկավար /
2. Համայնքի Մ. Մարգսյանի անվան միջնակարգ դպրոցի առաջին դասարան հաճախող երեխաներին դրամական օգնության ցուցաբերելու մասին:
   / զեկ. Գ. Սարգսյան – համայնքի ղեկավար /
3. Դիմումների քննարկում:
   /զեկ. Մ. Նշանյան – աշխատակազմի քարտուղար/

Լսեցին 1. Նորակերտի համայնքապետարանի 2018 թվականի բյուջեում ծախսերի անհրաժեշտությամբ պայմանավորված փոփոխություն կատարելու առաջարկության մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի և 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով Նորակերտի համայնքապետարանի կարիքների համար առաջացած ծախսային անհրաժեշտությունը՝ համայնքի ավագանին

Որոշեց

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Նորակերտի համայնքապետարանի պահուստային միջոցներից 4891 հոդվածից 4729 հոդվածին տեղափոխել 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ դրամ, համայնքի բնակիչներից